Հաստատում եմ՝ Լ. Այվազյան

01.09.2023թ.

<<ՀՀ ԱՐԱՐԱԳՏԻ ՄԱՐԶ ԶՈՐԱԿԻ ՄՈՆԹԵ ՄԵԼՔՈՆԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆ. ԴՊՐՈՑ >>ՊՈԱԿ

ԴԱՍՂԵԿԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ

Сканировано с CamScanner

Դասարան՝ 7-րդ

Դասղեկ՝ Թ. Իսախանյան

Էլեկտրոնային հասցե՝ tehmine2584@.mail.ru

Կրթությունը՝ Բարձրագույն

ՀՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը)

7-րդ դասարանում սովորում են 25 աշակերտ, որից 6 -ը՝աղջիկ, 19-ը՝ տղա:4 աշակերտ ընդգրկված են ԿԱՊԿՈՒ-ի խմբում, որից՝ 1 աշակերտ Խարբերդի մանկատնից , աշակերտների հետ տարվում է անհատական աշխատանք: 21 աշակերտները ցուցաբերում են իրենց կարողություններին և հմտություններին համապատասխան առաջադիմություն: Դասարանի աշակերտները համախմբված են, համերաշխ: Ձևավորվել է սովորողների միասնական կոլեկտիվ:

2. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Կազմակերպել ուսումնադաստիարակչական գործընթացը: Հետևել աշակերտների հաճախելիությանը: Առաջադիմության բարձրացման ուղղությամբ՝ աշխատել առարկայական ուսուցիչների հետ, պարբերաբար ստուգել, վերլուծել ընթացիկ և վերջնական գնահատականները:Սովորողների և մանկավարժների միջև ձևավորել բարյացկամ, ներդաշնակ փոխհարաբերություններ: Հետևել դասարանի կարգ ու կանոնին, սանիտարահիգենիկ վիճակին: Յուրաքանչյուր աշակերտի նկատմամբ ցուցաբերել անհատական մոտեցում, որպեսզի զերծ մնան

Сканировано с CamScanner

հնարավոր սխալներից: Ձևավորել պատասխանատվության, փոխօգնության, համագործակցության ոգի,սովորողների մեջ ստեղծել արդյունավետ հարաբերությունների համակարգ: Խթանել կոլեկտիվ ստեղծագործական գործունեության ձևավորմանը, ինչպես կրթական գործունեության մեջ, այնպես էլ դրանից դուրս: Աշակերտների մոտ ձևավորել արժեքային համակարգ: Կազմակերպել դասարանական ժողովներ, կազմակերպել կոլեկտիվ ստեղծագործական աշխատանքներ, կազմակերպել այցելությունն թատրոններ, թանգարաններ...կազմակերպել հանրօգուտ աշխատանքներ: Հաճախակի կազմակերպել ծնողական ժողովներ, ծանոթանալ երեխաների սոցիալական պայմաններին:Կանխել անհարկի ուշացումներն ու բացակայությունները:

3 . ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն

Այցելել եկեղեցիներ, զրուցել քահանաների հետ: Կարդալ հատվածներ Աստվածաշնչից, Նարեկացու մատյանից, քանի որ արժեքային համակարգի ձևավորման և մշակութային ժառանգության փոխանցման համար շատ կարևոր է հոգևոր դաստիարակությունը:Դասղեկի ժամերին անցկացնել զրույց-զեկուցուներ քրիստոնեական պատմությունից: Ծանոթացնել եկեղեցական տոներին: Աշակերտին քրիստոնյա մեծացնելու, հոգևոր ժառանգությունը փոխանցելու համար առաջին հերթին պետք է հաշվի առնել նրա մտածողության, երևակայությ բարոյական առանձնահատկությունները:

3.2 Գեղագիտական դաստիարակություն

Ամեն ինչ սկսվում է սեփական շրջակայքից: Աշակերտները պետք է առաջին հերթին ձևավորեն իրենց դասասենյակը: Աշակերտների մեջ ձևավորել գեղագիտական ճաշակ:Այցելել պատկերասրահներ և մշակութային օջախներ: Կազմակերպել էքսկուրսիաներ: Դասարանը կահավորել ճաշակով և նպատակային:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Աշակերտների մեջ սերմանել հայրենասիրություն, , քաջություն, կամքի ուժ: Ծանոթացնել հայ ժողովրդի անցած ուղուն՝ նրա փառավոր էջերին և հերոսներին: Սեր արթնացնել հայրենիքի նկատմամբ:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Ձևավորել առողջ ապրելակերպի վարքագիծ: Դասարանում ունենք դպրոցի սպորտլանդիայի խմբակի մասնակից աշակերտներ, որոնք մասնակցել են հաղթական խաղերին:Կեցվածքի ձևավորման համար ամենօրյա ուշադրության կենտրոնում պահել աշակերտի ճիշտ նստելաձևը և կեցվածքը: Անընդհատ անցկացնել ընդհանուր զարգացնող վարժություններ, ֆիզկուլտդադարներ:

Сканировано с CamScanner

3.5 Աշխատանքային դաստիարակություն

Աշակերտների մեջ դաստիարակել աշխատասիրություն, ընդգրկել սանիտարահիգենիկ աշխատանքներին պատրաստել հավաքածուներ: Հետևել դասասենյակի մաքրությանը: Սահմանել հերթապահություն: Մասնակցել դպրոցում կազմակերպվող շաբաթօրյակներին, դպրոցի բակի կանաչապատման աշխատանքներին: Հետևել կարգուկանոնին Սովորեցնել աշխատանքային գործիքներով անվտանգ ու հեշտ աշխատել:

3.6 Բնապահպանական դաստիարակություն

Աշակերտներին իրազեկել էկոլոգիայի, բնապահպանության անհրաժեշտությունը: Դրա պահպանության համար յուրաքանչյուրի մասնակցության կարևորությունը:

4. ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

Ապահովել աշակերտ-ծնող –դպրոց կապը: Ծնողներին ներգրավել դպրոցում կազմակերպվող միջոցառումներին և աշխատանքներին: Ծնողխորհրդի միջոցով հաճախակի կազմակերպել փոխայցելություններ աշակերտների տները: Ծնողներին մասնակից դարձնել դպրոցական կյանքին: Ծնողխորհրդի հետ կազմակերպել տնայցեր հետ մնացող և հաճախակի բացակայող աշակերտների տուն: Հայտնաբերել և օգնել սոցիալապես անապահով ընտանիքի երեխաներին: Աջակցել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սովորողին ու նրանց ընտանիքներին: Նպաստել սովորողների նկատմամբ դպրոցի և ընտանիքի միասնական մանկավարժական պահանջների կատարման ապահովմանը: Ամրապնդել դպրոց-ընտանիք կապը:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթները	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
1	Կազմակերպական անկյուն	09	Դասղեկ-աշակերտ
2	Անկախության օր: Վերհիշել ՀՀ կազմավորմանը,պետական խորհրդանիշներին	09	Դասղեկ-աշակերտ
3	Պատերազմը և իմ հայրենիքը	09	Դասղեկ-աշակերտ
4	Պատերազմը և իմ դպրոցի հերոսները	09	Դասղեկ-աշակերտ

Сканировано с CamScanner

5	Թարգմանչաց տոն	10	Դասղեկ-աշակերտ
6	Թափոնների օգտագործումը արտադրության մեջ	10	Դասղեկ-աշակերտ
7	Ճանապարհային երթևեկության կանոններ	10	Դասղեկ-աշակերտ
8	Աշնունն իմ գյուղում	10	Դասղեկ-աշակերտ
9	Մեր իրավունքներն ու պարտականությունները	11	Դասղեկ-աշակերտ
10	Արտակարգ իրավիճակներ և անձի պաշտպանություն	11	Դասղեկ-աշակերտ
11	Մեդիան իմ կյանքում	11	Դասղեկ-աշակերտ
12	Ազգային հերոս Մ. Մելքոնյանի 66 ամյակը	11	Դասղեկ-աշակերտ
13	Մեդիան իմ դպրոցում	12	Դասղեկ-աշակերտ
14	Ինչն է առավել կարևոր քո կյանքում	12	Դասղեկ-աշակերտ
15	Նոր տարի, նոր սպասումներ,նոր ձեռքբերումներ	12	Դասղեկ-աշակերտ
16	Ով եմ ես	01	Դասղեկ-աշակերտ
17	«Հայրենիք,ազգ,հայոց բանակ»հասկացների վերաբերյալ ճանաչ. զրույց-քննարկում	01	Դասղեկ-աշակերտ
18	Նրանք ապրում են մեր սրտերում	01	Դասղեկ-աշակերտ
19	Մեծարում հերոսների ընտանիքներին	02	Դասղեկ-աշակերտ
20	Գրականությունն իմ կյանքում	02	Դասղեկ-աշակերտ
21	Անցկացնել ընթերցանության շաբաթ.«Մեծ լոռեցին և նրա ստեղծագործությունները»	02	Դասղեկ-աշակերտ
22	Իմ հավանած գրական հերոսը	02	Դասղեկ-աշակերտ
23	Շնորհավոր տոնդ,մայրի՛կ	03	Դասղեկ-աշակերտ
24	ֆիլմի դիտում, քննարկում	03	Դասղեկ-աշակերտ
25	Միջոցառում՝ նվիրված մայրերին	03	Դասղեկ-աշակերտ
26	Առողջ ապրելակերպ	03	Դասղեկ-աշակերտ
27	Մեկ ազգ, մեկ եկեղեցի	04	Դասղեկ-աշակերտ
28	Եկեղեցական տոներ. Զատիկ	04	Դասղեկ-աշակերտ
29	Եղեռնազարկ իմ ժողովուրդ	04	Դասղեկ-աշակերտ
30	Ուխտագնացություն	04	Դասղեկ-աշակերտ
31	Իմ դպրոցի հերոսները	05	Դասղեկ-աշակերտ
32	Մայիսյան հերոսամարտեր	05	Դասղեկ-աշակերտ
33	Ինչ տվեց ինձ այս ուսումնական տարին	05	Դասղեկ-աշակերտ
34	Ճանաչենք մեր երկիրը (էքսկուրսիայի նախապատրաստում)	05	Դասղեկ-աշակերտ-ծնող

Сканировано с CamScanner